ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼԵՐՄՈՆՏՈՎՈՅԻ ԳՅՈՒՂԱՊԵՏ

« 07 » փետրվարի 2012 թ. N 7

ՈՐՈՇՈՒՄ

ՆՈՆԱ ԴԵՐՋՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԵՆ ՊՈՍՏՈԼՈԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱԿՏԱՆՈՂ ԽՈՏՀԱՐՔԻՑ 0.1 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԳՅՈՒՂԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հաշվի առնելով համասեփականատերեր՝ Նոնա Դերձյանի և Արմեն Պոստոլոկյանի դիմումը սեփականության իրավունքով իրենց պատկանող 0.736 հա խոտհարքից 0.1 հա հողամասում գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ կառուցելու թույլտվություն տալու մասին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Թույլատրել համասեփականատերեր՝ Նոնա Դերձյանին և Արմեն Պոստոլոկյանին սեփականության իրավունքով իրենց պատկանող 238-092 ծածկագրով խոտհարքից 1000 քմ, հողամասի վրա կառուցել անասնագոմ և պահակատուն համաձայն նախագծերի:
2. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լերմոնտովոյի համայնքում Նոնա Դերձյանի և Արմեն Պոստոլոկյանի պատկանող անասնագոմի շինարարության տիպային նախագծը և պահակատան շինարարության նախագիծը:
3. Նոնա Դերձյանին և Արմեն Պոստոլոկյանին սեփականության իրավունքով պատկանող 238-092 ծածկագրով 0.736 հա խոտհարքից 0.1 հա, համաձայն հատակագծի, առանձնացնել, որպես առանձին միավոր և փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների հողերի նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտներ հողերի, հողամասին տրամադրել գ. Լերմոնտովո Լճափնյա փողոցի 238/92 փոստային հասցեն:
4. Սույն որոշումով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը ենթակա է պետական գրանցման և արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշռում:

Ղեկավար Է. ՉԱԽԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Լերմոնտովի ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Լերմոնտովի համայնք, հասցե 1ն գ. Լերմոնտովո
հեռախոս 6-85-70, էլ. փոստ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«13» փետրվարի 2012 թվականի N 8

«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ» Լերմոնտովի ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011թ. նոյեմբերի 29-ի թիվ 380-Ա որոշման 3 կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» N 1582-Ն որոշման 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման» Լերմոնտովի համայնքային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

3. Սույն որոշմամբ ստեղծված հանձնաժողովի աշխատանքներին կարող են ներգրավել նաև մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2012 թ. փետրվարի 13
գ. Լերմոնտովո